Ավետիք Իսահակյան

Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելիս

Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելիս,
- Այս աշխարհում և ոչ մի բան հիմք չունի.
Վաղանցուկ են, կան ու չկան, սիրելիս,
Բոլոր իրերն ու աստղերը անհունի:

Լայնսիրտ եղիր, ողջը երազ համարե,
- Այս աշխարհում և ոչ մի բան միտք չունի.
Լացը՝ ժպիտ ու սերը՝ ցավ համարե,
Թե որ ապրես, կյանքդդ ինչո՞ւ համար է:

Ախ, մի՛ տխրիր, վիշտը կանցնի, - այդ ոչինչ,
- Այս աշխարհում և ոչ մի բան գին չունի.
Շատ մի՛ հրճվիր, սերն էլ կանցնի, բայց ոչինչ,
Կյանքն էլ կանցնի, - այդ որ ոչինչ ու ոչինչ:

1904